Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	041.301.01.7 Կառավարում
Ընդհանուր նկարագրությունը	Ծրագրի նպատակն է. Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված գիտելիքներ սպորտ կառավարման ոլորտում, ապահովել ուսանողներին անհրաժեշտ տեսական գիտելիքներով և տեղեկատվությամբ տեղական և միջազգային սպորտի շուկայի վերաբերյալ,Հայաստանի Հանրապետությունում սպորտի կառավարման արդյունավետության և մակարդակի բարձրացման նպատակով: Շրջանավարտների շրջանում ձեռնարկատիրական մշակույթի խթանմանը, որը կնպաստի սպորտի ոլորտում նոր ընկերությունների ստեղծմանը և մասնագիտական գործունեության նոր ճյուղերի զարգացմանը: Ուսանողներին ծանոթացնել սպորտի ոլորտում բիզնեսի վարման կարևորագույն դիսցիպլիններին և գործառույթներին: Ծանոթացնել սպորտի կառավարման ոլորտի արդի մեթոդներին և տեխնոլոգիաներին: Ուսուցումն իրականացվում է մոդուլային ծրագրով: Ուսումնական տարին բաղկացած է ուսումնական գործընթացի 4 մոդուլներից, իսկ ուսումնական կիսամյակը՝ 2:
Ուսումնական պլանը	https://tinyurl.com/ur55b996
Շնորհվող աստիճանը	Կառավարման մագիստրոս
ՈԱԾ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ
Կրեդիտները	60
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	1 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	600 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

	Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1. Սահմանել ոլորտի առանցքային հասկացությունները, առաջավոր սկզբունքները և մեթոդները: Ա.2. Նկարագրել գիտական և գործնական ուղղվածության ըմբռնումը կառավարման գործընթացների, ինչպես նաև ոլորտում ներգրավված հիմնական կազմակերպությունների և շահառուների դերի վերաբերյալ: Ա.3. Մեկնաբանել մասնագիտական ոլորտի տարբեր օղակները կարգավորող իրավական, ֆինանսական և էթիկայի նորմերը: Ա.4. Քննարկել ոլորտի միտումները, ինչպես նաև գլոբալիզացիայի ազդեցությունը սպորտի վրա: Ա.5. Բացատրել կառավարչական որոշումների մշակման գործընթացի, դրանց ընդունման և իրականացման կարգի վերաբերյալ մասնագիտական գործունեության ընթացքը: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ.1. Վերլուծել հենքային մասնագիտական տեղեկատվությունը, շուկայում իրավիճակը, և առաջադրել սպորտի ոլորտում կառավարման արդյունավետ ռազմավարություններ, զարգացման ծրագրեր և նախագծեր: Բ.2. Կիրառել սպորտում ռազմավարական պլանավորման, ֆինանսական կառավարման, ռիսկերի կառավարման և մարդկային ռեսուրսների կառավարման հիմնարար սկզբունքներ: Բ.3. Մշակել արդի մարտահրավերներին համապատասխան ծրագրեր, կիրառել SWOT և PESTEL հետազոտություններ սպորտի ոլորտում տարբեր իրավիճակների համար: Բ.4. Վերլուծել շուկայի, սպորտային ծառայությունների և ապրանքների ֆինանսավորման և կառավարման հիմնխնդիրները: Բ.5. Ուսումնասիրել և վերլուծել ոլորտում կառավարման տեղական և համաշխարհային լավագույն փորձը: Բ.6. Համադրել մասնագիտական ոլորտի ներքին և արտաքին գործոնները, և կատարել համապատասխան վերլուծություններ: Բ.7. Քննադատել ոլորտում առկա թերությունները, փաստերի հիման վրա մասնակցել բանավեճերի: Բ.8.Վերլուծել ոլորտի ժամանակակից միտումները: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի Գ.1. Տիրապետել մայրենի և օտար լեզվով ոլորտի հիմնական տերմինաբանությանը, բանավոր և գրավոր

	հաղորդակցվել մասնագիտական հանրության հետ: Գ.2. Ակադեմիական գրականություն որոնել, մեկնաբանել, հղումներ կատարել, համացանցային տեղեկատվությունը զտել և հավաքագրել: Գ.3. Կառուցել ինտերակտիվ մեխանիզմներ թիմային աշխատանքների կազմակերպման համար: Գ.4. Իր գործունեությունը կառուցելու՝ հիմնվելով համամարդկային բարոյական արժեքների և մասնագիտության էթիկական նորմերի վրա:
Աշխատաշուկան	• Պետական և մունիցիպալ կառավարման ոլորտում • ԿԳՍՄՆ • Պրոֆեսիոնալ սպորտային ակումբներում • ֆեդերացիաներ • մարքեթինգի, գովազդի և PR բաժիններում • Իրադարձությունների կառավարման ոլորտում • Մասայական մարզաառողջարարական կենտրոններում • Առևտրային և ոչ առևտրային սպորտային կազմակերպություններում • Մարզակառույցների կառավարման համակարգում